Basic information	
Number	N 897-Ա
Type	Որոշում
Act type	Исходный акт (18.06.2022-по сей день)
Status	Գործում է
Source	Հրապարակվել է միասնական կայքում
Enactment organisation	ՀՀ կառավարություն
Enactment date	17.06.2022
Signing organisation	ՀՀ վարչապետ
Signing date	17.06.2022
Effective date	18.06.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2022 թվականի N 897-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերի, 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել «ԷՅՉ ԲԻ ԷՄ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հ. Ներսիսյան փողոց, փակուղի 1, շենք 109 հասցեի պոմպակայանը՝ 24.4 քառ. մետր մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02022022-01-0259), և պոմպակայանի սարքավորումները՝ 11997465.9 դրամ (ներառյալ ԱԱՀ) հաշվեկշռային արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի, «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Արաբկիր 25-րդ փողոց, 17 շենք, 44 շինության պոմպակայանը՝ 11 քառ. մետր մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18082021-01-0270), և պոմպակայանի սարքավորումները՝ 4726567.52 դրամ (ներառյալ ԱԱՀ) հաշվեկշռային արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի, և «ՕԼԻՄՊ ՔՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Ն. Ստեփանյան փողոց 3/6 շենք, 282 շինության 15.2 քառ. մետր մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30042019-01-0340) պոմպակայանը և պոմպակայանի սարքավորումները՝ 10611000 դրամ արժեքով՝ համաձայն N

3 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքերն ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝

1) երկամսյա ժամկետում, ընկերությունների տնօրենների հետ համատեղ, ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման, պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման և նշված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելով ընկերությունների միջոցների հաշվին.

2) սույն որոշման 1-ին կետում նշված գույքերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին ամրացնելուց հետո երկամսյա ժամկետում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել համապատասխան համաձայնագիր՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքերը 2016 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ու «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի շրջանակներում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության հանձնելու նպատակով:

4. Առաջարկել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը ապահովել սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված համաձայնագրի նոտարական վավերացումը, դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման և նշված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի կատարումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

17.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 17-ի N 897-Ա որոշման

ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ՋԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ՓԱԿՈՒՂԻ 1, ՇԵՆՔ 109 ՀԱՍՑԵԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Մոդելը/Տեսակը	Չափի միավորը	Միավորի արժեքը (դրամ)	Քանակը	Ընդհանուր արժեքը (դրամ, ներառյալ ԱԱՀ)
1.	Սողնակային փական	Ø100	հատ	36390	7	254730
2.	Պողպատյա խողովակ	Ø108x4	գծմ	10600	20	212000
3.	Պողպատյա խողովակ	Ø133x4	մ	10610	1,8	19098
4.	Պողպատյա խողովակ	Ø159x4	մ	14440	1,9	27436
5.	Սողնակային փական	d=125	հատ	60850	1	60850
6.	Կցաշուրթ	d=125	հատ	7610	2	15220
7.	Կցաշուրթ	d=100	հատ	5680	22	124960
8.	Անկյունակ	d=133	հատ	14090	1	14090
9.	Անկյունակ	d=108	հատ	12500	9	112500
10.	Անկյունակ	d=89	հատ	9910	2	19820
11.	Եռաբաշխիչ	Ø108x108	հատ	17350	3	52050

12.	Կցորդիչ	d=89	հատ	9000	4	36000
13.	Փական ամերիկանկա	d=2″	հատ	45190	1	45190
14.	Փական ամերիկանկա	d=1″	հատ	11300	1	11300
15.	Փական գնդիկային	d=1/2″	հատ	3190	4	12760
16.	Փական գնդիկային պոլիպրոպիլենային խողովակի համար	d=50	հատ	12100	2	24200
17.	Պոլիպրոպիլենային խողովակ	d=50	մ	4160	6	24960
18.	Ամերիկանկա ներքին պարուրակով	d=50-1 1/2	հատ	7440	2	14880
19.	Ամերիկանկա արտաքին պարուրակով	d=20-1/2	հատ	1380	2	2760
20.	Անկյունակ պոլիպրոպիլենային խողովակի համար	d=50	հատ	2140	5	10700
21.	Եռաբաշխիչ պոլիպրոպիլենային խողովակի համար	d=50	հատ	2600	1	2600
22.	Եռաբաշխիչ պոլիպրոպիլենային խողովակի համար	d=50x20x50	հատ	2600	2	5200
23.	Եռաբաշխիչ պոլիպրոպիլենային խողովակի համար	d=20x20x20	հատ	470	1	470
24.	Մանոմետր		հատ	6150	3	18450
25.	Խողովակների ամրացման ձևավոր մասեր		կոմպլ	127700	1	127700
26.	Ֆիլտր մեխանիկական ցանցային	d=100	հատ	63640	2	127280
27.	Մետաղական ձևավոր մասեր		տ	1468990	0,01	14689.9
28.	Պոմպեր (4 հատ) WILO	W132130-2V1HE FF240 LP55 N=5.5KW P=47.2kg	կոմպ.	7099320	1	7099320
29.	Ընդարձակման բաք 500 լ		հատ	396140	2	792280
30.	Պոմպակայանի խողովակների ջերմամեկուսացում		$մ^2$	2570	21	53970
31.	Պոմպակայանի տարածք		քմ		24,4	2660002
	Ընդամենը՝					**11997465,9**

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

17.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 17-ի N 897-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ 25-ՐԴ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔ, 44 ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Նկարագրություն	Չափ	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը (ներառյալ ԱԱՀ)	Գումարը (Ընդամենը՝ ներառյալ ԱԱՀ)
1.	PPR խողովակ, banninger	Ø75	մ	10.00	6822. 72	68227. 20
2.	PPR խողովակ, banninger	Ø50	մ	1.00	3057. 12	3057. 12
3.	Խողովակների ջերմամեկուսացում	Մ50	մ	1.00	872. 64	872. 64
4.	Ամերիկանկա արտաքին պարուրակով	Ø50-1 1/2″	հատ	1.00	8064. 00	8064. 00
5.	Անկյունակ 90⁰ banninger	Ø75	հատ	4.00	5699. 52	22798.08
6.	Անկյունակ 90⁰ Firat	Ø50	հատ	1.00	648 .00	648 .00
7.	Եռաբաշխիչ banninger	Ø75	հատ	3.00	6899. 04	20697. 12
8.	Եռաբաշխիչ banninger	Ø75-50-75	հատ	1.00	6899. 04	6899. 04
9.	Եռաբաշխիչ	Ø50-20-50	հատ	1.00	1199. 52	1199. 52
10.	Կցորդիչ banninger	Ø75	հատ	4.00	3179 .52	12718. 08
11.	Փական գնդիկային PPR	Ø50	հատ	1.00	3155. 04	3155. 04
12.	Փական սողնակային PPR	Ø20	հատ	1.00	1180. 80	1180. 80
13.	Մետաղական խողովակի ձևավոր մասեր	Ø57	հատ	3.00	1393. 92	4181.76
14.	Ընդարձակման բաք	200լ	հատ	1.00	112868. 64	112868. 64
15.	Պոմպակայան երկու պոմպերից իր փականներով, զտիչներով, հակադարձ փականներով		կոմպլեկտ	1.00	2760000. 48	2760000. 48
16.	Պոմպակայանի տարածք		քմ	11	1700000.00	1700000.00
	Ընդամենը՝					**4726567.52**

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

17.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 17-ի N 897-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3/6 ՇԵՆՔ, 282 ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Քանակը	Չափի միավոր	Միավորի արժեքը (դրամ)	Ընդհանուր արժեքը (դրամ)
1.	Պոմպ ջրի (ինվենտորային) Grundfos	3	հատ	2500000	7500000

2.	Բոլեր IDS Global Ընդարձակման բակ	1	հատ	80000	80000
3.	Ֆիլտր D63	2	հատ	20000	40000
4.	Ամերիկանկա 32	1	հատ	2000	2000
5.	Գնդիկավոր փական 32	1	հատ	3000	3000
6.	Butterfly 0.5 փական	5	հատ	30000	150000
7.	63 մետաղական խողովակ մեկուսիչով	12	մ	3000	36000
8.	Պոմպակայանի տարածք	15,2	քմ	2800000	2800000
	Ընդամենը՝				**10611000**

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

17.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Change History

Changing Act	Corresponding incorporation

Changed acts

Changing Act	Corresponding incorporation